

**Պաշտոնի անվանումը՝** Վերաապահովագրության գծով պատասխանատու

**Պարտականությունները՝**

- Նոր վերաապահովագրողների հետ համագործակցության նպատակով հանդիպումների կազմակերպում, պայմանագրերի կնքում, վերաապահովագրական բրոքերների հետ համագործակցության ապահովում,
- Վերաապահովագրության օրլիգատոր պայմանագրերի և համաձայնագրերի կնքում, վերակնքում, փոփոխում և դադարեցում,
- Վերաապահովագրության օրլիգատոր պայմանագրի շրջանակներում վերաապահովագրված ապահովագրության վկայագրերի վերաբերյալ բորդերոների կազմում, հաստատում և ստորագրում: Վերաապահովագրության բորդերոների վերաբերյալ փոխադարձ հաշվարկների ակտերի կազմում, վճարման հաշիվների ստացում, ստուգում և պարզաբանում
- Վերաապահովագրության ֆակուլտատիվ պայմանագրերի և համաձայնագրերի կնքում, վերակնքում փոփոխում և դադարեցում,
- Վերաապահովագրության մասով ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունների կազմում և տրամադրում Հաշվապահական հաշվառման բաժին,
- Ընկերության հետ համագործակցող վերաապահովագրողների ռեյտինգների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվության ստուգում:

**Պահանջվող հմտությունները՝**

- Բարձրագույն տնտեսագիտական կրթություն,  
Առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ ապահովագրական ոլորտում (ցանկալի է վերաապահովագրական),
- Հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուների գերազանց իմացություն,
- MS Office փաթեթի գերազանց իմացություն,
- Հաղորդակցվելու գերազանց ունակություն,
- Պատասխանատվության բարձր զգացում,
- Ապահովագրական օրենսդրություն, ապահովագրական ծառայությունների ընդհանուր իմացություն, գործարար էթիկայի կանոնների իմացություն,

**Դիմելու կարգը՝** Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունը (CV) [hr@reso.am](mailto:hr@reso.am) էլեկտրոնային փոստի հասցեին: Մրցույթում դիտարկվելու նպատակով խնդրում ենք թեմա (subject) դաշտում պարտադիր նշել պաշտոնը, որի համար դիմում եք: Ինքնակենսագրականը անհրաժեշտ է ուղարկել .pdf կամ .doc ձևաչափով: Մրցույթի հետագա փուլերում մասնակցության համար հարցազրույցի կիրավիրվեն այն թեկնածուները, ովքեր առավելագույնը կհամապատասխանեն տվյալ աշխատատեղի պահանջներին:

**Վերջնաժամկետը՝** 11.06.2018թ.